ՀՏԴ 94 (479.25)

Պատմություն

Իսկուհի ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի ավագ դասախոս, պ.գ.թ.
E-mail: iskuhi82@mail.ru

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ 2000-2007ԹԹ.

Քննության առնելով 2000-2007թթ. Արցախի Հանրապետության ներքաղաքական կյանքն ու զարգացումները՝ փորձել ենք վեր հանել քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը ընթացող գործընթացներին, պետականաշինությանը:
Դեռևս 1991թ. սեպտեմբերի 2-ին միջազգային իրավական նորմերի ու ԽՍՀՄ օրենքների համապատասխան հանրապետություն հռչակվեց Լեռնային Ղարաբաղը, որի հայությունը որոշեցրեց հայրենի բնօրրանում ազատ ապրելու ուղեգիծ: Այս իրադարձությամբ Արցախում սկզբնավորվեց անկախ, ինքնիշխան, ազգային պետականության կերտման, այդ համատեքստում մարդու իրավունքների համընդունելի սկզբունքների, ընտրությունների՝ որպես ժողովրդավարության կարևորագույն ինստիտուտներից մեկի կիրառման գործընթացը:
Ուսումնասիրվող ժամանակահատվածում շարունակվեց ժողովրդավարության ճանապարհով ընթացող գործընթացները՝ նախագահական, խորհրդարանական , ՏԻՄ ընտրությունները ու Սահմանադրության հանրաքվեն, որին անմիջապես ներգրավվեցին քաղաքական –հասարակական ուժերը և իրենց նպաստը բերեցին պետականության կայացմանն ու ամրապնդմանը , երկրում ժողովրդավարական արժեքների արմատավորմանը:
Բանալի բառեր՝ *անկախություն, հանրապետություն, քաղաքականություն, կուսակցություններ, հասարակական-*

կազմակերպություններ, ընտրություններ, ժողովրդավարություն, հանրաքվե, Սահմանադրություն, դիտորդներ:

Ի. Ավանեսյան

АКТИВИЗАЦИЯ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ И ВНУТРИПОЛИТИЧЕСКОЕ РАЗВИТИЕ НКР В 2000-2007 ГГ.

Рассмотрев внутриполитическую жизнь и процессы, происходившие в Республике Арцах в 2000-2007 гг., мы попытались обозначить участие политических сил и общественных организаций в политических процессах и государственном строительстве.

2 сентября 1992 года, в соответствии с международными правовыми нормами и законами СССР, Нагорно-Карабахская Республика была провозглашена республикой, где армянский народ избрал путь свободной жизни, у родных очагов. Это событие положило начало формирование независимой, суверенной, национальной государственности в Арцахе, и в этом контексте был запущен процесс применения всеобщих принципов прав человека и выбора как одного из важнейших институтов демократии.

Следует подчеркнуть, что в обозначенный период продолжились демократические процессы, были проведены президентские, парламентские выборы, а также выборы в органы местного самоуправления, референдум по Конституции, к которому были непосредственно привлечены общественно – политические силы. Эти процессы внесли свой вклад в становление и укрепление государственности, укоренение в стране демократических ценностей.

Ключевые слова: *независимость, республика, политика, партии, общественные организации, выборы, демократия, референдум, Конституция, наблюдатели.*

I. Avanesyan

PROMOTION OF SOCIAL- POLITICAL LIFE AND INTERNAL POLITICAL DEVELOPMENTS IN NKR IN 2000-2007

Having examined the internal political life and processes that took place in the Republic of Artsakh in 2000-2007, we tried to identify the participation of political forces and public organizations in political processes and state building.

On September 2, 1992, in accordance with international legal norms and the laws of the USSR, the Nagorno-Karabakh

Republic was proclaimed a republic, the Armenians of which chose the path of free life on their native lands.This event marked the beginning of the formation of an independent, sovereign, national statehood in Artsakh, and in this context, the process of applying the principles of human rights and elections as one of the most important institutions of democracy, was initiated.
It should be emphasized that during the indicated period democratic processes continued: presidential and parliamentary elections were held, as well as elections to local governments, a referendum on the Constitution, in which social and political forces were directly involved. These processes have contributed to the formation and strengthening of statehood, the rooting of democratic values in the country.
Key words: *independence, republic, politics, parties, public organizations, elections, democracy, referendum, Constitution, observers.*

Հետպատերազմյան հասարակության մեջ ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման ու մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը, որպես կանոն, երկարաժամկետ ու դանդաղ զարգացող գործընթաց է, հաճախ էլ՝ հիվանդագին: Զարգացման արդյունքները հիմնականում կախված են ժողովրդի՝ իր ներկայացուցիչներին ազատ ընտրելու իրավունքից, այդ իրավունքից օգտվելու հնարավորություններից: Այս ճանապարհին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը առաջընթաց ունեցավ:

Հրադադարին հաջորդած տարիներին Արցախի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը հնարավորություն տվեցին բարեփոխումների ուղին բռնել:

Հարկ է նկատել, որ հասարակական-քաղաքական կյանքը աշխուժացավ հատկապես ԼՂՀ Ազգային ժողովի երկրորդ՝ 1995թ., և 1996թ. առաջին նախագահական ընտրությունների[1] ժամանակ: Հետագայում, ընտրությունների արդյունքում ժողովրդավարության գործընթացը ավելի խորացվեց, և ընտրությունները անցան նոր օրենքների պահանջներին համապատասխան: Հատկապես 2000-2008թթ. անցկացված ընտրությունների ընթացքն ու արդյունքները մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ Արցախի Հանրապետությունում զարգանում են անկախ պետականությունը և քաղաքական համակարգի բոլոր գործառույթները:

[1] ***Օհանջանյան Մ.***, *Անկախության քայլերը, Ստեփանակերտ, 1998, էջ 32:*

Պետականաշինության գործընթացում, առհասարակ ներքաղաքական-հասարակական կյանքի զարգացման գործում անժխտելի է քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների դերը: Անցումը բազմակուսակցական համակարգին հնարավորություն տվեց հանրապետությունում գործելու ոչ միայն ավանդական կուսակցություններին, այլև առաջացան նոր կուսակցություններ, քաղաքական միավորներ, որոնք կոչված էին նպաստելու երկրում ժողովրդավարության հաստատմանը, ժողովրդի քաղաքական մշակույթի, պետական մտածողության ձևավորմանը: Բազմակուսակցությունը և հասարակական կազմակերպությունների ազատ գործունեությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում երաշխավորվում էր օրենսդրական ակտերով, ապա Սահմանադրությամբ: Քաղաքական կուսակցությունները ձևավորվում էին ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը[1]: Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում ակտիվությամբ աչքի ընկած կուսակցություններն, իրենց դերակատարությունը ունեցան ներքաղաքական զարգացումներում:

Հանրապետությունում յուրաքանչյուրն իրավասու էր այլ անձանց հետ ստեղծելու միավորումներ, այդ թվում՝ մասնագիտական միություններ, և անդամակցել դրանց: Դեռևս 1996թ. ապրիլին Ազգային ժողովի կողմից ընդունված <<Հասարակական կազմակերպությունների մասին >> ԼՂՀ օրենքը[2] հնարավորություն տվեց ստեղծել հասարակական կազմակերպություն՝ հիմնադիր նախաձեռնությամբ: 2002թ. տվյալներով՝ ԼՂՀ-ում գրանցված էին 70 հասարակական կազմակերպություններ[3], որոնց մեծ մասը դասական առումով կայացման փուլում էր:

Հանրապետությունում ներքաղաքական կյանքն աննախադեպ ակտիվացավ 2000թ. ԼՂՀ երրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների ժամանակ: 3-րդ գումարման Ազգային ժողովի կազմը բազմակուսակցական էր և ներկայացնում էր հանրապետության քաղաքական դաշտը: Ընտրություններին մասնակցեցին ընտրական իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 59, 7 տոկոս քաղաքացիները[4]: Հավելենք, որ ընտրություններին ներկա անկախ դիտորդները՝ 14 միջազգային և 42 տեղական, հնարավորություն ունեցան

---

*[1] Տե՛ս **Մինասյան Է.**, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան , 2013, էջ 321:*

[2] Տե՛ս <<Հայաստանի Հանրապետություն>> , թիվ 96, 20.05.2008:

[3] Տե՛ս << Ազատ Արցախ>>, թիվ 60, 24.05.2003:

*[4] Տե՛ս **Դավթյան Ս.**, Ժողովրդավարության ուղիով: ԼՂՀ-ում անցկացված ընտրությունները/ 2000-2002/, Ստեփանակերտ, 2002, էջ 11:*

այցելելու 170 ընտրական տեղամասեր և մասնակցելու ձայների հաշվմանը: Ընտրությունների արդյունքների մասին կազմված ակտում միջազգային դիտորդները հատկանշեցին. <<Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների վստահված անձինք, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները և հավատարմագրված դիտորդները հնարավորություն են ունեցել հետևել քվեարկության ընթացքին, տեղամասերում մասնակցել ձայների հաշվառմանը և որ <<Քվեարկության, քվեաթերթիկների տրման, դրանց ձևակերպման, ձայների հաշվարկման գործընթացում դիտորդները խախտումներ չեն հայտնաբերել>>[1]: ԱԺ պատգամավորներ էին ընտրվել «Ժողովրդավարական Արցախ միություն» (ԺԱՄ) հասարակական-քաղաքական կազմակերպության 20, Հայ Հեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ) Արցախի կառույցի 9, Արցախի Արմենական կուսակցության 1, Արցախի սոցիալ-դեմոկրատական կուսակցության 1 անդամ, ինչպես նաև անկուսակցականներ: Ազգային ժողովում 6 անդամ ուներ անկախ պատգամավորի կարգավիճակ[2]: Վերոնշյա քաղաքական իրադարձությունները ևս մեկ անգամ վկայեցին, որ Արցախի Հանրապետությունում ժողովրդավարության ճանապարհը ընտրած հասարակական-քաղաքական ուժերը անմասն չեն պետականաշինության գործընթացին:

ԼՂՀ–ում սկսեցին գործել ժողովրդավարական ինսիտուտները, որոնց գործունեությունը արտահայտվում էր հատկապես ՏԻՄ ընտրությունների ժամանակ: Նման օրինակի ականատես եղանք նաև 2004թ. օգոստոսի 22-ին տեղի ունեցած Ստեփանակերտի քաղաքապետի ընտրություններում, որտեղ հաղթեց ընդդիմության ներկայացուցիչը[3]: Այ դեպքում ոչ միայն մեծացավ ժողովրդի վստահությունը իր ուժերի նկատմամբ, այլև ԼՂՀ՝ որպես ժողովրդավարական երկիր ունեցավ բարձր հեղինակություն:

Երկիր քաղաքական կյանքի օրացույցը համապետական, տարածքային և տեղական մակարդակներում հետզհետե ավելի ու ավելի սերտորեն էր շաղկապվում ընտրությունների ժամանակացույցի հետ, իսկ պետական կառավարման մարմինների ձևավորման և առաջարկվող ուղեգծի կարևորագույն հիմնադրույթները կանխորոշվում են քաղաքական դերակատարների ընտրական շահերով: Փաստորեն, ոչ միայն քաղաքական կուսակցություններն ու առանձին քաղաքական գործիչներ , այլև զանգվածային լրատվամիջոցները, հասարակական

---

[1] *Նույն տեղում, էջ 13:*

[2] *Նուին տեղում, էջ 15:*

[3] *Քաղաքապետի ընտրություններում հաղթեց Է. Աղաբեկյանը:*

կազմակերպությունները ակտիվորեն ներգրավված էին ԼՂՀ-ում կյանքի կոչվող ընտրական քաղաքականության ենթակառուցվածքներում:
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը, , որը իրականացվում է համաձայն 1998թ. հունվարի 19-ին ընդունված <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի[1]: Օրենքը պարունակում էր ինքնակառավարում հասկացության բնորոշումը, դրա սկզբունքները, մարմիններն ու իրավասությունները, ինչպես նաև կոորդինացնում տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառույցների միջև փոխգործունեությունը:

ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրություններն անցկացվեցին 1998թ. սեպտեմբերի 27-ին, որը նորություն էր Հանրապետության կյանքում: Նախատեսված էր ԼՂՀ-ում ընտրել ավելի քան 200 համայնքի ղեկավարներ և ավագանու խորհուրդների շուրջ 1500 անդամ[2]: Սկզբում մարդիկ աղոտ էին տեսնում ՏԻՄ ընտրությունները, որը ընթանում էր <<ժողովրդի հետ, ժողովրդի համար>> նշանաբանով: Ի տարբերություն խորհրդարանական և նախագահական ընտրությունների՝ ՏԻՄ թեկնածուների առաջադրումը կատարվում էր ինքնաառաջադրման կարգով, գրավ մուծելու միջոցով: Հաջորդ ՏԻՄ ընտրությունները կայացան 2001թ., երրորդը՝ 2004թ., չորրորդը՝ 2007թ.[3]: ՏԻՄ ընտրությունները իրենց հերթին հնարավորություն տվեցին ներքաղաքական կյանքի ակտիվ զարգացումների, որը կարող ենք նաև համարել ժողովրդավարության հերթական դրսևորում: Հանրապետությունում գործող կուսակցությունները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, առանձին գործիչները ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին ՏԻՄ ընտրություններում, մասնակցեցին լայնորեն ծավալված նախընտրական քարոզչությանը՝ նպատակ ունենալով մասնակից դառնալ երկրի հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի բարեփոխումներին:

Չնայած ընտրությունից ընտրություն կատարելագործվում էր աշխատանքների կազմակերպման որակը, և որոնվում նոր ու արդյունավետ ուղիներ, այնուամենայնիվ, օրենսդրական բազան դեռևս լիակատար չէր: ԼՂՀ պետականության ամրապնդման և ժողովրդավարության զարգացման

---

[1] *<< Արցախ>> թիվ 86, 01.08.1998:*
[2] ***Օհանջանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 49:*
[3] ***Դավթյան Ս.**, նշվ. աշխ., էջ14:*

գործում 2005 թվականը արժևորվեց նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի[1] ընդունմամբ:

Հետագա գործընթացները համոզեցին, որ օրենսգրքի ընդունումը կարևոր ու առաջընթաց քայլ էր , քանի որ այն փոխարինեց մինչ այդ գործող բոլոր ընտրական օրենքները, իսկ նրանում ներառված դրույթները հնարավորություն տվեցին կանոնակարգելու ու կատարելագործելու ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացը:

Արցախում տեղի ունեցած 2002թ. և 2007թ. նախագահական ընտրությունները նոր որակ հաղորդեցին ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը և ժողովրդավարական հասարակության կայացմանը: 2002թ. նախագահական ընտրություններում նախագահի չորս թեկնածուներից Արկադի Ղուկասյանի օգտին քվեարկեց ընտրողների 88, 95 տոկոսը[2]: Ընտրություններին նախորդեցին Արցախի ավանդական կուսակցությունների (ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտե, ԼՂԿԿ) հայտարարությունները, որտեղ կոչ արվեց համակիրներին, բոլոր ընտրողներին՝ ակտիվորեն մասնակցել նախագահական ընտրություններին և իրենց քվեն տալ Արկադի Ղուկասյանի օգտին[3]: Որպես դիտորդներ, Արցախ ժամանեցին 56 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք անցկացված ընտրությունները որակեցին *ազատ, թափանցիկ, ժողովրդավարական,* որը լիովին համապատասխանում է միջազգային իրավունքի չափանիշներին: Վերընտրված նախագահին ուղղված շնորհավորանքներին միացան Հարավային Օսիայի, Աբխազիայի նախագահները, ՀՀ նախագահը, վարչապետը, Ամենայն հայոց կաթողիկոսը, ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆը, ովքեր գնահատեցին ԼՂՀ ժողովրդին՝ իր ճակատագիրն ինքը տնօրինելու և ազատ ու անկախ ապրելու վճռականությամբ[4]:

ԼՂՀ նախագահի 2007թ. ընտրությունները էականորեն տարբերվում էին նախորդ բոլոր ընտրություններից: Վերջին տարիներին, չնայած հանրապետությունում առկա էին դեռևս չլուծված բազմաթիվ հարցեր՝ Սահմանադրությունից բխող օրենսդրական բարեփոխումների կատարում, կառավարման համակարգի հետագա ժողովրդավարացում, սոցիալական հասցեագրված քաղաքականության և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մշակում, տնտեսական զարգացումը խթանող

---

[1] *Տե՛ս **Նասիբյան Ս.**, ԼՂՀ. Ժողովրդավարության զարգացման և պետականության ամրապնդման ճանապարհին, Ստեփանակերտ, 2010, էջ 23:*

[2] *Տե՛ս **Դավթյան Ս.**, նշվ. աշխ., էջ 39:*

[3] *Տե՛ս <<Ազատ Արցախ>>, թիվ 97, 25.07. 2002:*

[4] *Տե՛ս **Աբրահամյան Հ.**, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը 2000-2008թթ., Երևան , 2013, էջ 122:*

ֆինանսավարկային քաղաքականության նոր հայեցակարգի մշակում և ներդրում, կարող ենք ասել՝ ապահովված էր տնտեսական առաջընթաց, իրականացվել էին սոցիալական մի շարք ծրագրեր, ամրապնդվել շուկայական ազատ տնտեսությունը խթանելու հիմքերը, ինչը զգալիորեն նպաստել է ներդրումների աճին: Ամենակարևորներից մեկը՝ պետականության փորձը և նրա զարգացման միտումներ, ամրագրվել են հանրաքվեով ընդունված ԼՂՀ Սահմանադրության մեջ:

2007թ. նախագահական ընտրությունները ընթացան միանգամայն այլ ձևաչափով: Նախագահի թեկնածուներից Բակո Սահակյանի շուրջ համախմբվեցին և նրան սատարեցին խորհրդարանում ներկայացված քաղաքական բոլոր ուժերը, ինչպես նաև արտախորհրդարանական մի շարք ուժեր: Ընտրությունների ժամանակ ընտրողների ընդհանուր թիվը կազմեց 92114 ընտրող, որոնցից քվեարկությանը մասնակցեցին 71286 (77, 4 տոկոս), որը շուրջ 4 տոկոսով գերազանցեց 2005թ. Ազգային ժողովի , 2 տոկոսով՝ 2002թ. նախագահական ընտրությունների ցուցանիշները: Ձայների ճնշող մեծամասնությամբ (85, 1 տոկոս)՝ ԼՂՀ նախագահ ընտրվեց Բակո Սահակյանը[1]: Նախագահական ընտրությունների կապակցությամբ ԼՂՀ ժամանած ավելի քան 100 միջազգային դիտորդներ իրենց բանավոր ու գրավոր հայտարարություններով փաստեցին նախագահական ընտրությունների՝ միջազգային չափանիշների համապատասխանությունը: Հատկապես հավաստեցին , որ կայացած ընտրությունները բավականին լուրջ առաջընթաց են ժողովրդավարության զարգացման գործում, իսկ Լեռնային Ղարաբաղի իշխանություններն էլ բավականին լուրջ տրամադրված էին և մեծ ջանքեր են գործադրել , որ դրանք անցկացվեն ժողովրդավարական սկզբունքների համաձայն[2]:

Հանրապետությունում քաղաքական դաշտի աշխուժացման, կուսակցությունների, հասարակական-քաղաքական կազմակերպու-թյունների կայացման և պետական կառավարման ու տեղական կառավարման մարմիններում , դրանց անդամների դերի ամրապնդմանն ուղղված աշխատանքների պայմաններում կայացան 2005թ. չորրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները:

Հարկ է նկատել, որ այս ընտրությունները նոր որակ և իմաստ հաղորդեցին երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Առաջին անգամ ընտրողները իրավունք ունեցան քվեարկել համամասնական և մեծամասնական ընտրակարգով, ինչը նոր հարթության վրա էր դնում քաղաքական հարաբերությունները: Խորհրդարանական ընտրություններին

---

[1] *Տե՛ս **Նասիբյան Ս.**, նշվ. աշխ., էջ 86-87:*

[2] *Տե՛ս Նույն տեղում, էջ 110:*

մասնակցելու համար ԼՂՀ ԿԸՀ կողմից գրանցվեցին համամասնական ընտրակարգով առաջադրված 7 կուսակցություններ՝ <<Ազատ հայրենիք>> (17 թեկնածու), Արցախի ժողովրդավարական (25 թեկնածու), Բարոյական վերածննդի (3 թեկնածու), ԼՂ կոմունիստական (10 թեկնածու), <<Մեր տունը Հայաստանն է>> (4 թեկնածու), <<Սոցիալական արդարություն>> (3 թեկնածու) կուսակցությունների և <<ՀՅԴ-Շարժում 88>> դաշինքի (18 թեկնածու) ընտրական ցուցակները, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշմամբ գրանցվեցին մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության 111 թեկնածուներ: Հանրապետության 87949 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 64841 ընտրող կամ ընտրողների 73,3%-ը, համամասնական ընտրակարգով ընտրությունների 90094 ընտրողներից՝ 66998-ը կամ 74,4%-ը[1]: Քվեարկության արդյունքում համամասնական ընտրակարգով առաջին երեք տեղերը զբաղեցրին <<Արցախի ժողովրդավարական կուսակցությունը>>, <<ՀՅԴ-Շարժում 88>> դաշինքը և <<Ազատ հայրենիք>> կուսակցությունը: Մեծամասնական ընտրակարգով խորհրդարան մտան ինչպես կուսակցությունների թեկնածուներ, այնպես էլ անկախ, անկուսակցական թեկնածուներ[2]: Նկատենք, որ ընտրությունների ընթացքին հետևում էին 14 տեղական ու 113 միջազգային դիտորդներ, այդ թվում՝ Հայաստանից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից , Հունաստանից և այլ երկրներից: Ըստ դիտորդների գնահատականի, ընտրությունները ընդհանուր առմամբ անցել էին ազատ ու թափանցիկ՝ ընտրությունների անցկացման ժողովրդավարական ստանդարտներին համապատասխան: Ընտրությունների ընթացքը լուսաբանում էին զանգվածային լրատվության միջոցների 80-ից ավելի ներկայացուցիչներ: Փաստորեն, չորրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները սկիզբ դրեցին երկրում քաղաքական նոր մակարդակի զարգացմանը, որը հետագայում իր ազդեցություն ունեցավ ներքաղաքական կյանքի վրա:

2005թ. նախատեսված էր հանրապետությունում անցկացնել մարդահամար: Հոկտեմբերի 18-ին՝ մարդահամարի սկսման օրը, խորհրդարանը դիմում հղեց բնակչությանը, որում հատկապես նշված էր, որ Արցախի պետական անկախության պայմաններում առաջին անգամ անց է կացվում մարդահամար, որի նպատակն է . <<Պարզելու հանրապետության առկա ժողովրդագրական պատկերը, ինչը ելակետային վիճակագրական հիմք կծառայի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների մշակման, աշխատանքային ռեսուրսների ուսումնասիրման ռացիոնալ

---

[1] *Տե՛ս ԼՂՀ ԿԸՀ պաշտոնական կայքէջ*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

տեղաբաշխման և օգտագործման, ընտրական տեղամասերի կազմակերպման, արդի և մյուս բոլոր ոլորտներում մեր առաջընթացի հեռանկարների կանխատեսման և ծրագրային սահմանման համար >>[1]: Այս և նման գործընթացները, հասարակական-քաղաքական միավորների ակտիվ ներգրավվածությամբ զարգացումները նաև ժամանակի պահանջ են նորաստեղծ և զարգացող պետությունների համար ու հանդիսանում են նրա քաղաքական համակարգի ձևավորման, կատարելագործման անհրաժեշտ փուլ:

Անկախությունը հռչակած ԼՂՀ -ն պետք է ունենար Հիմնական օրենք՝ Սահմանադրությունը, որը կվավերացներ ազատ ու անկախ պետականություն կերտելու ևս մեկ կարևոր քայլ: Հանրապետությունում Սահմանադրության փոխարեն գործում էր մի քանի կետ ունեցող Սահմանադրական օրենք, որն ընդունված չէր համաժողովրդական քվեարկությամբ, ուստի դիվանագիտական և իրավական ատյաններում չէր կարող գնահատվել որպես ժողովրդի քաղաքական կամքն արտահայտող փաստաթուղթ: Անկախության տարիներին ԼՂՀ-ում աստիճանաբար հասունացան Սահմանադրության ընդունման անհրաժեշտ պայմանները, ստեղծվեց համապատասխան օրենսդրական դաշտ, որը հիմք ծառայեց Հիմնական օրենքի մշակման և ընդունմանը: ԼՂՀ-ի սեփական Սահմանադրություն ունենալու օգտին հանդես եկան հասարակության գրեթե բոլոր խավերը, բոլոր քաղաքական ուժերն ու հասարակական կազմակերպությունները: Ուստի Սահմանադրության մշակմամբ զբաղվող և արդեն մի քանի տարի գործող պետական հանձնաժողովը[2] պետք է արագացներ Հիմնական օրենքի ընդունումը: ԼՂՀ ԱԺ-ն, ընդունելով հանրապետության սահմանադրության նախագիծը, այն համաժողովրդական հանրաքվեի ներկայացրեց 2006թ. դեկտեմբերի 10-ին: Հանրաքվեի նախօրյակին ԱԺ <<Ժողովրդավարություն>>, <<Հայրենիք>> և <<ՀՅԴ-Շարժում-88>> պատգամավորական խմբակցությունները հանդես եկան հայտարարությամբ, որտեղ շեշտված էր, որ պատմական կարճ ժամանակահատվածում հաջողվել է Արցախում ստեղծել ժողովրդավարական հասարակության և ազատ շուկայական տնտեսության հիմքեր: Պատգամավորական խմբերը հույս հայտնեցին, որ սպասվող հանրաքվեն կդառնա հասարակության քաղաքական ինքնակազմակերպման՝ 15 տարի առաջ սկիզբ դրված անկախությանը: Պատգամավորական խմբերը արցախահայությանը վստահեցնում էին, որ

---

[1] ԼՂՀ ԱԺԸԱ, ԼՂՀ 4-րդ գումարման ԱԺ առաջին նստաշրջանի սղագրություն, 19.10.2005:

[2] Սահմանադրական հանձնաժողովը՝ հանրապետության նախագահի գլխավորությամբ ստեղծվել էր դեռևս 1996թ., սակայն տարբեր պատճառներով դեռևս նիստ չէր հրավիրվել:

Սահմանադրության ընդունումը թույլ կտա ոչ միայն սահմանադրական մակարդակում ամրագրել պետական ինքնիշխանության հիմնարար սկզբունքները և նախանշել հանրապետության զարգացման նոր փուլը, այլև լիցք կհաղորդի պետական կառավարման համակարգում նոր, ավելի ազատական սկզբունքների ձևավորման ու զարգացման և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացին[1]:

Միանգամայն ակնհայտ էր, որ ԼՂՀ Սահմանադրության ընդունմամբ արցախահայությունը պատմական կարևոր քայլ կատարեց պետականության կայացման և ամրապնդման գործում:

Այսպես, 2006թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեում[2], ԼՂՀ Սահմանադրության ընդունումից հետո, հանրապետության պետական իշխանության համակարգը շարունակեց իր զարգացումը իշխանության տարանջատման սկզբունքի խորացման ու ժողովրդավարացման ուղիով:

Հասարակական կազմակերպությունները, միությունները, որոնք երկրի ներքաղաքական զարգացումներում ակտիվություն էին ցուցաբերում, հետաքրքրված էին նաև հանրապետության արտաքին քաղաքականությամբ, հատկապես՝ հակամարտության կարգավորմամբ: Այդ մասին է վկայում 2002թ. հունիսին Ստեփանակերտում կայացած Արցախի հասարակական կազմակերպությունների հավաքը[3], որը նվիրված էր ԼՂՀ ներքաղաքական իրավիճակին, Արցախի հիմնախնդրի կարգավորմանը: Համատեղ հայտարարության մեջ հասարակական կազմակերպությունները, իրենց մտահոգությունները հայտնելով միջազգային կառույցների վերաբերմունքի կապակցությամբ, պատրաստակամություն հայտնեցին համագործակցելու, որը ըստ կազմակերպությունների՝ կնպաստի հասարակական բոլոր ոլորտների զարգացմանը:

Նորանկախ պետությունների օրինակով, եթե քննարկման ենք արժանացնում մեր երկրում քաղաքական համակարգի հաստատման և դրա հետագա զարգացման հարցը, ապա պետք է ենթադրենք և ընդունենք, որ խոսքը ժողովրդավարության եթե ոչ համընդհանուր և լրիվ հաստատման, ապա համենայն դեպս , հասարակության քաղաքական կազմակերպման <<վատ>> ձևերից <<լավ>> ձևերի անցման մասին է, այսինքն՝ այն ներառող ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական

---

[1] *Տե՛ս **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 138-139:*

[2] *Տե՛ս **Նասիբյան Ս.**, նշվ. աշխ., էջ 52: Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը կազմել է 90077 մարդ, իսկ քվեարկությանը մասնակցել է 78389 մարդ, նախագծին կողմ քվեարկել 77279 , դեմ՝ 554 մարդ: Ընտրությունների ընթացքին հետևում էին ավելի քան 100 միջազգային դիտորդներ:*

[3] *Տե՛ս <<Հայաստանի Հանրապետություն>>, թիվ 25, 12. 07. 2002:*

գծերի մասին, ինչը, ի միջի այլոց, յուրահատուկ է անցման ժամանակաշրջան ապրող համարյա բոլոր երկրներին:

Գրականություն

Արխիվ

1. ԼՂՀ ԱԺԸԱ, ԼՂՀ 4-րդ գումարման ԱԺ առաջին նստաշրջանի սղագրություն, 19.10.2005:

Գրքեր

2. **Աբրահամյան Հ.**, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը 2000-2008թթ., Երևան , 2013:
3. **Դավթյան Ս.**, Ժողովրդավարության ուղիով: ԼՂՀ-ում անցկացված ընտրությունները/ 2000-2002/, Ստեփանակերտ, 2002:
4. **Մինասյան Է.**, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013:
5. Նասիբյան Ս., ԼՂՀ. Ժողովրդավարության զարգացման և պետականության ամրապնդման ճանապարհին, Ստեփանակերտ, 2010:
6. **Օհանջանյան Մ.**, Անկախության քայլերը, Ստեփանակերտ, 1998:

Մամուլ

7. << Արցախ>> թիվ 86, 01.08.1998:
8. <<Ազատ Արցախ>>, թիվ 97, 25.07. 2002:
9. << Ազատ Արցախ>>, թիվ 60, 24.05.2003:
10. <<Հայաստանի Հանրապետություն>> , թիվ 96, 20.05.2008:
11. <<Հայաստանի Հանրապետություն>>, թիվ 25, 12. 07. 2002:

Կայքէջ

12. ԼՂՀ ԿԸՀ Պաշտոնական կայքէջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը: